

INTERIOR DASEIN | BERLIN

www.InteriorDAsein.de +49 179 54 75 312 - archigalentz@gmail.com

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ Ն. ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Քաղաքացի՝ Հարություն Սարոյի Գալենցի կողմից

Էլ. հասցե: archigalentz@gmail.com

Կայքէջ՝ www.InteriorDAsein.de ; www.Arrieregarde.org

Հեռ.: + 49 179 547 5312 (Բեռլին, Գերմանիա); + 374 9 (0)99 919 818 (Երևան)

ԴԻՄՈՒՄ-ԽՆԴՐԱՆՔ

Հարգելի Պարոն Փաշինյան.

Դիմում եմ Ձեզ ոչ միայն որպես քաղաքացի, այլ նաև որպես արվեստագետ, ով ունի երեսուն տարվա միջազգային և հայաստանյան գեղարվեստական նախագծերում ցուցադրվելու և ցուցահանդեսներ համադրելու փորձ:

Բեռլինի արվեստների համալսարանն ավարտելուն պես 2000 թ.-ին, առաջնային մտահոգությունս է եղել խորությամբ ուսումնասիրել թե՛ հայկական արդի և դասական կերպարվեստը, թե՛ Կալենցների տոհմի գեղարվեստական ժառանգությունը: Այդ ուղղությամբ կազմակերպել եմ բազմաթիվ ցուցադրություններ, պատկերազրքեր կազմել, դասախոսություններ վարել, հոդվածներ հրատարակել Սփյուռքի և Հայաստանի հանդեսներում, պարբերականներում: Հայկական արվեստի հետ սերտ առնչվել ու համագործակցել եմ, իսկ 2008 թ-ից Բեռլինում ցուցասրահ եմ բացել, որտեղ կազմակերպել եմ 20-ից ավել ցուցահանդեսներ՝ նվիրված հայ

կերպարվեստին, բազմաթիվ ծրագրեր են ներկայացրել այլ վայրերում՝ որպես հրավիրված արվեստագետ եւ համադրող:

Իմ խորհին շնորհակալությունն են ուզում հայտնել նաև Ձեզ, որ կառավարության մակարդակով կազմակերպեցիք մոբական կողմի պապիս՝ Նիկոլայ Նիկողոսյանի թաղման արարողությունը Կոմիտասի անվան Պանթեոնում: Խնդրում են անձնական հսկողության տակ վերցնել նաև Կալենցների թողած ժառանգության հարցի կարգավորումը, որոնք ամբողջ Եվրոպայում, ԱՄՆ-ում, որպես Հայկական մշակույթի այցեքարտերից մեկն են համարվում: Այդ ժառանգությունը, որ 1000-ից ավելի արվեստի կտորներ և պատմական կարևոր իրեր է պարունակում, այսօր պատանդ է վերցված: 2017-ին մահացած հորս՝ արվեստագետ Սարո Գալենցի ստորագրությունը կեղծելով և օգտագործելով բարձր պաշտոն ունեցող անձանց հետ իրենց ծանոթությունները, արվեստից անտեղյակ անձերը վտանգում են ազգային բարձր արժեք ունեցող ստեղծագործությունների ապագան: Այդ անձի տնօրինության տակ հայտնվելու դեպքում, շատ շուտ արվեստը կվերածվի բիզնեսի:

Հարգելի պարոն Փաշինյան, դիմում են անձամբ Ձեզ, քանի որ մեկ տարուց ավել պայքարելով և բոլոր օրինավոր միջոցները օգտագործելուց հետո, հորս՝ Սարո Գալենց Հարությունի մահից հետո, համաձայն օրենքի, ես և քույրս՝ Անի Նիկոլ Գալենցը, հորս երկրորդ կինը՝ Լարիսա Կատասանովան և նրանց դուստրը՝ Արմինե Գալենցը համատեղ ընդունել ենք հորս ժառանգությունը և դարձել Երևան քաղաքի Կալենցի անվան փողոցում գտնվող թիվ 18 և 18/1 տան բաժնային սեփականատերերը:

2010 թ.-ից այդ տանը գործել է նաև Կալենցի տուն-թանգարանը, որը, ցավոք, օրենքին համապատասխան գրանցված չի եղել և երբեք չի ունեցել թանգարանին պատկանող արվեստի նմուշների ցուցակ: Այդ տանն է գտնվում նաև հորական կողմից իմ տատ ու պապի՝ Հարություն և Արմինե Կալենցների ողջ գեղարվեստական ժառանգությունը, իմ և քրոջս՝ Անի Նիկոլի, մորս՝ Նազելի Նիկողոսյանի և մորական պապիս՝ հայտնի քանդակագործ Նիկոլայ Նիկողոսյանի որոշ արվեստի գործեր, նաև արվեստի իմ հավաքածույից մի շարք կտավներ: Այդ տունը կառուցել է մեր ընտանիքը՝ երեք սերունդ շարունակ: Տուն-թանգարանը մեր ողջ ընտանիքի նպատակն էր:

2017 թ.-ի նոյեմբերի 23-ին դիմել են Արաբկիրի նոտարական գրասենյակի նոտարին՝ Սուսաննա Դանիելյանին, որպեսզի օրենքի սահմանված կարգով տուն-թանգարանում կատարվի գույքագրում, ներկա գտնվող նկարների հաշվառում:

Լ. Կատասանովան, ով Սարո Գալենցի հետ օրինական ամուսնացել է իր մահից երկու տարի առաջ, արգելել է նոտարի մուտքը տուն-թանգարան: Իրավունքներիս

պաշտպանության նպատակով դիմել են դատարան՝ գույքագրման խոչընդոտները վերացնելու պահանջով:

Թիվ ԵԱՔԴ /4697/02/17 քաղաքացիական գործով հայցապահանջը բավարարվել է, բերվել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է: 2018 թ.-ի սեպտեմբեր ամսից գործը գտնվում է վճռաբեկ դատարանում և մինչ օրս դատարանի կողմից որևէ որոշում չի կայացվել:

Իմ ընկալմամբ, Լ. Կատասանովան և նրա «հովանավորները» փորձում են գործը հնարավորինս ձգձգել, որպեսզի նոտարը հնարավորինս ուշ կատարի կամ նույնիսկ չկարողանա կատարել գույքագրումը և արվեստի նշանավոր գործերի ցուցակագրումը:

Հարգելի պարոն Փաշինյան, Դուք քանիցս նշել եք, որ կտրուկ դեմ եք իշխանության կողմից իրավապահ մարմինների գործունեությանը միջամտելուն: Հասկանալի է, որ Հայաստանում կտրուկ փոփոխություններ տեղի չեն ունենա, եթե օրինապահությունը և դատարանների անկախ աշխատանքը չգնահատվի: Ուսանելով և երկար տարիներ ապրելով Եվրոպայում, ես միայն ողջունում եմ այդ մոտեցումը և պատրաստ եմ ամեն կերպ աջակցել հասարակական փոփոխություններին դեպի թափանցիկություն և օրենքի գերակայություն: Սակայն արվեստագետ Կալենցների ժառանգության խնդիրը ոչ թե բողոք է անձերի նկատմամբ և դատարանների աշխատանքի մեջ խառնվելու խնդրանք, որ ինձ և քրոջս բավարարող արդյունք գրանցվի, այլ սա կոչ է այնպես անել, որպեսզի քնչական և դատախազական կառույցները, որոնք դեռևս մինչև հեղափոխությունն էին ներգրավված այս դավադրության մեջ, չչարաշահեն դեռ շատ տեղերում թերի օրենքը: Այլապես մենք կկանգնենք խայտառակ փաստերի առաջ, որոնք սերունդներին հիասաթափեցնելու են և ազդելու են Սփյուռք-Հայրենիք հարաբերությունների վրա:

Հարգելի Պարոն Փաշինյան, ես դիմում եմ Ձեզ երկար մտածելուց հետո և ինչպես նշեցի, երկար ամիսներ արդարադատություն սպասելուց թե՛ Երևանի ոստիկանությունից, թե՛ քննիչներից, թե՛ հարկադիր կատարածուներից: Վերջին երկու ամսվա ընթացքում ակնհայտ դարձավ, որ «վերևից» առկա է ճնշում, ևմշակութային ժառանգության հարցում շարունակվում է սիրել անթափանցիկությունը և կողմնապահությունը:

Թույլ տվեք ծանոթացնել Ձեզ մանրամասներին:

Ինձ համար արդեն զարմանալի է և ոչ տրամաբանական, որ ժառանգված գույքը ապահովելու համար հնարավոր չէ նոտարի հրատապ այցը և բնակավայրի կամ թանգարանի դռների կնքումը: Նոտարին կարելի է մերժել մուտք գործել տվյալ տարածք, ոստիկանին կարելի է ստել, հարկադիր կատարածուին կարելի է

արհամարել և պատասխանել, թե ըստ օրենքի հնարավոր է դատի դիմել համաձայն չլինելու դեպքում: Այսպիսի թերությունների մասին կարելի է մամուլում հոդված գրել և միգուցե հասարակական քննարկման առարկա դարձնել, բայց Ձեր ուշադրությունը չենք շեղի նման հարցերի վրա: Միայն թե երբ քրեական գործ է հարուցվում խոշոր հանցագործության վերաբերյալ և իրար հետևից քննիչներ են փոխվում՝ որպեսզի ամիսներ անց գործը «ցրվի» և նույնիսկ գրավոր պատասխան լույս աշխարհի չգա ու հնարավոր չլինի քայլեր կատարել, ապա դա արդեն երկրի կառավարությանն արժանի խնդիր է:

Նոտարին խոչընդոտելու գործի շրջանակներում տեղեկացա, որ հայրս արվեստի իր աշխատանքները նաև իր ծնողների՝ Հարություն և Արմինե Կալենցների արվեստի գործերը իբրև թե նվիրել է եղբորը՝ Արմեն Կալենցին: Իմ կարծիքով նվիրատվությունը հաստատող այդ փաստաթուղթը (այն կազմված է ոչ ճիշտ ձևով, հապճեպ և, կարևորը, վավերացված չէ նոտարի կողմից կամ Սարո Գալենցի ձեռքով արված գրության), ի հայտ է եկել հորս մահից չորս ամիս հետո և ներկայացվում է այնպես, կարծես թե այն կազմվել է հորս կյանքի օրոք՝ իր մահից մեկ տարի առաջ: Այս փաստաթուղթը ներկայացվել է դատարանում իբրև հիմք ժառանգության գույքագրումը արգելափակելու համար: Այդ «նվիրատվության» պատճեն ուսումնասիրելուց միանգամից աչքի է ընկնում, որ դա շինծու է և հապճեպ է կազմվել: Իմ և քրոջս իրավունքները պաշտպանելու նպատակով դիմել եմ ոստիկանություն՝ հորս ստորագրությունը կեղծելու կասկածով և քրեական գործ հարուցելու պահանջով:

2018 թ.-ի սեպտեմբերի 22-ին քննիչի կողմից որոշում է կայացվել թիվ 14174818 քրեական գործով վարույթը կարճելու մասին, որի պատճենն բազմաթիվ պահանջներից հետո իմ փաստաբանին է հասել 2018 թ.-ի նոյեմբեր ամսին:

Որպես գործը կարճելու հիմք առաջ է քաշվել պատճառաբանություն, որ փորձագետները չեն կարող եզրակացություն անել նվիրատվության փաստաթղթի իրական կամ կեղծ լինելու մասին, քանզի հորեղբայրս՝ Արմեն Կալենցը չի թույլատրել, որպեսզի դատական փորձագետը պայմանագրի տարբեր տեղամասերից թղթի մասնակի վնասման եղանակով վերցնի նյութի նմուշներ, որպեսզի որոշվի պայմանագրի վաղեմությունը:

Քննիչի կողմից փորձագետին չի տրամադրվել նաև Արմեն Կալենցի ստորագրության նմուշները, որպեսզի պարզվի Սարո Գալենց տպագիր գրառմամբ անուն ազգանվան դիմաց առկա ստորագրությունները կատարված են Արմեն Կալենցի կողմից, թե մեկ այլ անձի կողմից: Այստեղ տրամաբանական հարց է ծագում, թե ո՞րն է այդ մերժման պատճառը և ինչու՞ է Արմեն Կալենցը հրաժարվում փաստաթուղթը ենթարկել փորձաքննությանը, եթե այն իսկապես բնօրինակ է, այլ ոչ

թե կեղծված մի թուղթ, և ինչու՞ է Արմեն Կալենցը հրաժարվում օրենքին համաձայն և արդար եղանակով հանգուցալուծել այս հարցը:

Ես ստիպված էի դիմել դատական պաշտպանության՝ ընդդեմ Արմեն Կալենցի՝ Սարո Հարությունի Գալենցի անվամբ 2016 թ.-ի նոյեմբերի 2-ին կազմված նվիրատվության պայմանագիրը անվավեր ճանաչելու, կեղծ գործարք իրականացնելու հիմքով և անվավերության հետևանք կիրառելու պահանջով:

Թիվ ԵԴ5713/02/18 քաղաքացիական գործի շրջանակում դատարանի կողմից մերժվել է իմ կողմից ներկայացված երկու միջնորդությունը՝ նվիրատվության պայմանագրի բնօրինակը դատարան ներկայացնելու և դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ՝ պատճառաբանությամբ, որ պատասխանող կողմը ընդունում է փաստաթղթի իսկությունը և ստորագրությունը:

Ջարմանալի արագությամբ դատարանի կողմից նշանակվում են դատական նիստերը. չեմ հասկանում, թե որն է այս դեպքում դատարանի այդ չափ շահագրգռվածության ցուցաբերումը և հրատապ գործողությունը, մինչդեռ իմ պահանջների ընթացքները անհամաչափ ձգձգվում են՝ ինչպես վերը նշեցի, թիվ ԵԱԲԴ /4697/02/17 գործով շուրջ մեկ տարի է վերջնական դատական ակտը բացակայում է:

Մոտ մեկ տարի է, ինչ մամուլի ներկայացուցիչները հրապարակման խնդրանքով դիմում են մեզ՝ տրամադրելու Կալենցների ժառանգության անորոշության հետ կապված նյութերը, քանզի պարզ է, որ այս ամենը գուտ նեղ ընտանեկան պատմություն չէ, այլ Կալենցների ժառանգությունը ազգային, մշակութային արժեք է և դրա շուրջ առաջացած խնդիրները արժանի են հանրայնացմանն ու հասարակական քննարկմանը:

Ես կտրուկ մերժում եմ մամուլի կողմից եկող այդ առաջարկները, քանզի սպասում եմ Հայաստանի արդարադատությանը և իրավասու մարմինների աշխատանքի ավարտին:

Բոլոր իմ փորձերը հասու լինել ինձ և քրոջս հասանելի ժառանգությանը խոչընդոտվել են՝ ընդհուպ մինչև Կալենցի տուն-թանգարանի դարպասների զմռսումը և այնտեղ մուտք գործելու բիրտ, կոպիտ արգելքը:

Սույն թվականի սեպտեմբերի 26-ին Լ. Կատասանովայի հետ պայմանավորվածության համաձայն, երկու կողմից հրավիրյալ փորձագետների մասնկացությամբ՝ պետք է իրականացվեր տուն-թանգարանում գտնվող արվեստի գործերի հաշվառումը, սակայն ես և իմ կողմից հրավիրված վկաները կրկին հայտնվեցինք փակ դարպասների առջև:

Մինչդեռ, ուշադրություն դարձրեք, EBAY կայքում վաճառքի է դրվում արվեստի իմ աշխատանքներից մեկը, որը այլ գործերի շարքում գտնվում է Կալենցի տուն-թանգարանում:

Վերջերս ինձ դիմել են Հարություն Կալենցի գործերից մեկի իսկությունը հաստատելու խնդրանքով, որը նույնպես հայտնվել է վաճառքի շուկայում, իսկ Սարո Գալենցի մի քանի աշխատանքները Լ. Կատասանովայի կողմից վաճառքի են հանվել անցյալ տարի մայիս ամսին Art Expo-ի տարածքում իրականացված Արվեստի միջազային տոնավաճառում: Այսինքն տիկին Կատասանովան արհամարում է դատարանի կողմից կիրառված արգելքը առ այն, որ քանի դեռ տուն-թանգարանում չի տարվել այնտեղ առկա բոլոր արվեստի գործերի հաշվառումը՝ կողմերը իրավունք չունեն դրանք տեղափոխել, արտահանել, առավել ևս վաճառել:

Նկատենք, որ Լ. Կատասանովայի կողմից օրենքը խախտող այս գործողությունները ոչ մի կերպ իրավական դաշտի՝ հարկադիրի, ոստկանության կողմից չեն դիտարկվում որպես լուրջ խախտումներ նույնիսկ օրենքի խախտման փաստով իմ բողոքը ներկայացնելուց հետո:

2018 թ.-ի հոկտեմբերի 2-ին ես հանցագործության մասին հաղորդում եմ ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի դատախազություն, որ Կալենցի թանգարանում առկա կտավները բացակայում են, նշել եմ որ կտավները չկան, քանի որ դրանց վերաբերող ողջ տեղեկությունը հայրս ժամանակին էլեկտրոնային տարբերակով ինձ է տրամադրել, որպեսզի ես կտավների ժառանգությանը վերաբերող ամեն մի մանրուք իմանամ, ուստի քաջ տեղյակ եմ դրանց բովանդակությանն ու քանակին. հայրս անվստահություն ուներ իրեն շրջապատող անձանց հանդեպ:

Տուն-թանգարանում են ապրում Լարիսա Կատասանովան և հորեղբայրս՝ Արմեն Կալենցը, ուստի նրանք էլ, հավանորեն, յուրացրել, վաճառել, թաքցրել կամ նվիրել են այդ մեծ արժեք հանդիսացող արվեստի գործերը: Ինձ արդեն խոսակցություններ են հասնում, որ որոշակի կտավներ նվիրվել են դատական հայցերը և հարցերը վերոնշյալ անձանց օգտին լուծելու համար: Արաբկիրի ոստիկանությունում քրեական գործի հարուցումը մերժվել է և մեկ ամսից ավել է ինչ իմ փաստաբանը բազմաթիվ պահանջներով դիմում է այդ որոշման պատճեն ստանալու համար, բայց անպատասխան: Ինչո՞ւ: Արդյոք պատճառը այն է, որ ես կաշառքներ և կաշառքի ձևով թանկարժեք նկարներ չեմ բաժանում:

Մեծարգո Պարոն Փաշինյան,

հուսամ, որ երկարաշունչ այս բողոքիս կսկիծն ու զայրույթը կընկալվեն Ձեր կողմից հավուր պատշաճի, քանի որ շուտով պատմա-մշակութային, օրենսդրական և

հանրային, հասարակական հետաքրքրության ու քննարկման լուրջ առարկա է դառնալու:

Գիտեմ, որ մեծ հայրենասեր եք, արվեստի մեծ երկրպագու և չափազանց արդարամիտ, ուստի դիմում եմ Ձեզ օրենքը, արդարադատությունը գործի դնելու խնդրանքով:

Խնդրում եմ հանձնարարել համապատասխան մարմիններին՝ դատական, քրեական գործերը վերցնելու հսկողության ներքո, բացառել ծանոթ, բարեկամ, (ան)թաքույց միջնորդների գործավարույթը, և թող դատարանը, քննչական մարմինները, դատախազությունն ու համապատասխան կառույցները կայացնեն այս գործին առնչվող որոշումները միայն ու միայն օրենքին համահունչ և համապատասխան, հաշվի նստելով այն փաստի հետ, որ գործ ունեն արվեստի զարգացման, պահպանման հետ և Կալենցների գործերը չեն դասվում սովորական քաղաքացիական հայցերի շարքին, այլ մշակույթային արժեքների պահպանման գործերն են, որոնք պետք է քննվեն անաչառ, որպեսզի Կալենցները շարունակեն պահպանվել ՀՀ մշակույթում, չօտարվեն այլ պետություններում:

Եվս մեկ անգամ խնդրում եմ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ 2018 թ.-ի սեպտեմբեր ամսից թիվ ԵԱՔԴ /4697/02/17 գործով բողոքը գտնվում է ՀՀ վճռաբեկ դատարանում և որևէ որոշում չի կայացվել մինչ օրս, ինչն էլ ինձ մոտ կասկած է առաջացրել արդարադատության անաչառության վերաբերյալ, քանի որ Վճռաբեկ դատարանի կողմից կայացրած որոշումից է կախված տուն-թանգարանում գույքագրում անելու հարցը և միտումնավոր որոշումը ձգձգվում է ժամանակ տալով կտավների ճակատագրերը անօրինական ճանապարհով որոշելուն, 2018 թ.-ի սեպտեմբեր ամսից մինչ օրս Արաբկիր վարչական շրջանի դատախազության կողմից դեռ որոշվում է թիվ 14174818 քրեական գործով /որը բողոքարկել եմ 29.11.2018 թ.-ի/ քննիչի կողմից կայացրած որոշման օրինականությունը և զարմանալի է, որ հեղափոխությունից հետո էլ դեռ կան գործերի հովանավորներ, որոնց օժանդակությամբ գործերը վերջնական ավարտի չեն հասնում, քանի որ վերջնական ավարտները լինելու են արդարության կողմը:

Մեծարգո Պարոն Փաշինյան, բողոքս օրենքի շրջանակներում կարգավորելու, արդարության և արդարադատության հասնելու նպատակով դիմել եմ նաև ՀՀ Նախագահին, երբ վերջինս գտնվում էր Բեռլինում, առցանց դիմել եմ նաև Արդարադատության նախարարի առաջին տեղակալին, սակայն ՀՀ ԱՆ վերահսկողության վարչության աշխատակցի կողմից ստացվել է պատասխան նախարարի անունից, որ որևէ պետական մարմին կամ պաշտոնատար անձ իրավասու չէ միջամտել կամ հսկողություն իրականացնել դատարանի գործողությունների նկատմամբ և ամբողջ պատասխանում վկայակոչվել է ՀՀ

Մահմանադրությունը, որով ևս մեկ անգամ փաստվում է, որ հեղափոխությունը դեռևս հասանելի չէ բոլորին, քաղաքացիների դիմումներին, բողոքներին լուրջ չեն վերաբերվում պատկան մարմինները, չեն ուսումնասիրում բովանդակությունը, որպեսզի հասկանան հարցի լրջությունը, այլ միայն վկայակոչում են հողվածներ, որոնք ընդհանրապես չի կիրառվում ՀՀ-ում, ինչին համոզվեցի ես այս մեկ տարվա ընթացքում: Արդարադատություն իրականացնող մարմիններին ավելի հեշտ է մերժել բողոքները, քան օրենքի տառին համապատասխան որոշումներ կայացնել, ինչի արդյունքում ստիպված իրավունքներիս և մշակույթի պահպանման հարցով ստիպված դիմում եմ Ձեզ:

Կից ներկայացում եմ՝ նվիրատվության պայմանագրի եջի պատճեն, դիմումի օրինակ հասցեագրված Ա. Հովհաննիսյանին, ՀՀ ԱՆ ստացված դիմումիս պատասխանը

Հարգանքով՝ Արչի Հարություն Գալենց

Բեռլին, Գերմանիա, 20.01.2019թ.

